ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԷԼԻԶԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ ՍՆԴ/0463/04/20 ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԿԱՅԱՑՎԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ, «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 23-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍԱՄԲ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Էլիզա Հայրապետյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՍՆԴ/0463/04/20 սնանկության գործով կայացված դատական ակտի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մասամբ մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2022 թվականի հունիսի 13-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Էլիզա Հայրապետյանի (այսուհետ՝ դիմող) դիմումը, որով դիմողը խնդրել է.

«... 2. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՍՆԴ/0463/04/20 սնանկության գործով կայացված դատական ակտը ճանաչել Սահմանադրությանը հակասող՝ հիմքում դնելով մասնավորապես վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումն առ այն, որ թիվ ԵԿԴ/3482/02/17 քաղաքացիական գործով կայացված վճիռն այլևս կորցրել է իր կատարելության հատկանիշը կատարողական թերթ չստանալու և այն կատարման չներկայացնելու հիմնավորմամբ:

3. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի «Կատարողական թերթ ստանալու համար դիմումը ներկայացվում է մեկ տարվա ընթացքում, եթե օրենքով այլ բան սահմանված չէ...» «մեկ տարվա ընթացքում» խմբագրությամբ իրավական նորմը և 4-րդ կետի «Եթե

դատական ակտով հաստատված պարտավորությունը ենթադրում է տարաժամկետ կամ պարբերական կատարում, ապա կատարողական թերթ կարող է տրվել պարտավորությունների կատարման ողջ ընթացում ինչպես նաև պարտավորություն-ների կատարման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում» «մեկ տարվա ընթացքում» խմբագրված նորմը ճանաչել ՀՀ Սահմա-նադրությանը հակասող»:

2. Ներկայացված դիմումով դիմողի կողմից բարձրացվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի սահմանադրականության հարց:

Դիմողի կարծիքով՝ Վճռաբեկ դատարանը ակնհայտորեն դուրս է եկել գործի քննության սահմաններից:

Դիմողի պնդմամբ՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ վճարային պարտավորության անվիճելի լինելու փաստի առկայությունը չի հիմնավորվել, քանի որ բողոք բերած անձի սնանկության հիմքում դրվել է թիվ ԵԿԴ/3482/02/17 քաղաքացիական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված վճարային պարտավորությունը, մինչդեռ սնանկության դիմումը նշված վճիռն օրինական ուժի մեջ մտնելու մեկամյա ժամկետի ավարտից հետո դատարան ներկայացնելով՝ դիմումատուն զրկվել է վճռով նախատեսված անվիճելի վճարային պարտավորության առկայության հիմքով պարտապանին սնանկ ճանաչելու իր իրավունքի իրականացման իրավական հնարավորությունից:

Ըստ դիմողի՝ Վճռաբեկ դատարանի այն եզրակացությունը, թե դատական ակտը հարկադիր կատարման ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը բաց թողնվելու դեպքում այն կորցնում է իր կատարելիության հատկանիշը, չի բխում իրավունքի գերակայության, ներառյալ՝ իրավական որոշակիության սկզբունքի բովանդակությունից և հակասում է դատական ակտերի պարտադիրության վերաբերյալ ՄԻԵԴ-ի և Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումներին: Դիմողը գտնում է, որ Վճռաբեկ դատարանի արձանագրած՝ դատական ակտի կատարելիության չափանիշի ենթադրյալ կորուստն անգամ ի չիք չի դարձնում դատական ակտի պարտադիրության՝ վերը նշված նորմերով սահմանված բնույթը,

ուստի դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից ի վեր պարտադիր ու վերջնական է և ենթակա է կատարման՝ առանց ժամկետային վերապահման:

Հիմք ընդունելով շարադրված պատճառաբանությունները՝ դիմողը կարծում է, որ Վճռաբեկ դատարանը խախտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված՝ արդար դատաքննության և իրավական որոշակիության սկզբունքները, արդյունքում՝ խաթարվել է դատական ակտերի վերջնական և պարտադիր լինելու հատկանիշների բովանդակությունը, առկա է սեփականության իրավունքի անկաշկանդ իրացմանն անհամաչափ միջամտություն, չի ապահովվել Սահմանադրության 78-րդ հոդվածի պահանջը:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մասամբ ընդունման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

3.1. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում: Հիշյալ դրույթը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա/ երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ/ երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ/ երբ վիճարկում է այդ ակտով **իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը**, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սույն դիմումի ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումով ներկայացվող խնդրանքի 2-րդ կետում **իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթ առհասարակ չի վկայակոչել**, ինչը հիմք է Սահմանադրական դատարանի կողմից գործի քննությունը մերժելու համար:

Սահմանադրական դատարանը վերահաստատում է, որ սահմանադրական արդարադատություն հայցելու անձի իրավունքը, ինչպես նաև օրենսդրությամբ դրա իրացման նպատակով նախատեսված ընթացակարգային կարգավորումներն ինքնանպատակ չեն, ուստիև հայեցողաբար մեկնաբանվել չեն կարող: Այս համատեքստում հարկ է սահմանադրական արդարադատություն հայցող ֆիզիկական և իրավաբանական անձանց ուշադրությունը հրավիրել այն հանգամանքին, որ վերջիններս մինչև Սահմանադրական դատարան դիմելն օրենսդրական պարտականություն են կրում պահպանելու այն պահանջները, որոնք նախատեսված են Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողն իրավասու չէ դիմելու Սահմանադրական դատարան, քանի որ չի պահպանել **իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը վիճարկելու պահանջները:**

Ավելին, Սահմանադրական դատարանը փաստում է, որ սույն գործով դիմողի նկատմամբ ենթադրյալ անբարենպաստ իրավական հետևանքներն առաջացել են թիվ ՍՆԴ/0463/04/20 սնանկության գործով Վճռաբեկ դատարանի 03.12.2021թ. որոշմամբ, որը և դիմողը վիճարկում է Սահմանադրական դատարանում, մինչդեռ

խնդրո առարկա դատական ակտի իրավաչափությունը չի կարող Սահմանադրական դատարանում քննության առարկա հանդիսանալ:

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում, եթե դիմումում **առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին**:

Վերահաստատելով 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը Սահմանադրական դատարան դիմելու համար **իրավասու սուբյեկտ չէ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով ամրագրված են Սահմանադրական դատարանի կողմից գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու հիմքերը: Մասնավորապես՝ նշված օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե **դիմողն իրավասու չէ տվյալ հարցով** դիմելու Սահմանադրական դատարան:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը՝ տվյալ մասով, ենթակա է մերժման:

3.2. Անդրադառնալով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով սույն անհատական դիմումի ընդունելիությանը՝ Սահմանադրական դատարանը, ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքներից՝ գտնում է, որ տվյալ մասով առկա չեն գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ և 69-րդ հոդվածներով նախատեսված հիմքերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումը՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ենթակա է ընդունման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասով, 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և 69-րդ հոդվածի 1-ին մասով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի և 69-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Էլիզա Հայրապետյանի դիմումի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Էլիզա Հայրապետյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՍՆԴ/0463/04/20 սնանկության գործով կայացված դատական ակտի մասով, մերժել:

3. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի և 69-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ գործի քննության ժամկետը երկարաձգել և գործի դատաքննությունն սկսել 2022 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 11.00-ին:

4. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի՝ գործով զեկուցող նշանակել Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանին:

5. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի և 68-րդ հոդվածի 7-րդ մասի՝ գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով:

6. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի և 69-րդ հոդվածի 7-րդ մասի՝ սույն գործով

որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել վիճարկվող օրենքն ընդունած մարմնին՝ Ազգային ժողովին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

1 սեպտեմբերի 2022 թվականի
ՍԴԱՈ-134